ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Արազի ափին բոստանը լինի,
Սալվի-ուռ *) տնկեմ վարդեր ու լալայ.
Հով ուռենու տակ քողտիկս **) լինի,—
Օջաղիս մէջը կրակ բոցկլտայ։

Ու սրտով սիրած Շուշանս լինի,
Օջաղիս կողքին գուրգուրենք իրար.—
Արազի ափին բոստանս լինի,
Ծով-քրտինք թափեմ Շուշիկիս համար։

II

Մութ անտառով լուռ մանկուգամ,
Բուն ու ագռաւն ինձ կ'ըսեն.
—«Ա՜խ, խեղճ տղայ, ինչ գունատ ես,
Դուն հիւանդ ես...» ինձ կ'ըսեն։

Մութ անտառով լուռ մանկուգամ,
Ցօղը կը շաղէ ծառերէն.
—«Ա՜յ, խեղճ տղայ, վերքդ խորն է,
Վերադ կուլանք»... ինձ կ'ըսեն։

Քամին փչեց ու ծառերէն
Տերեւները վար ընկան.
—«Է՜հ, խեղճ տղայ, տերեւներն են
Քու մահիճն ու գերեզման...»

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

---

*) Սալվի-ուռ՝ լացող ուռենի։
**) Քողտիկ՝ փոքրիկ խրճիթ բոստաններում։